

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ**

Հ Ր Ա Մ Ա Ն

« 15 » հունվարի 2021 թ.

N 88-ԱԿԸ

**ՈՐԴԵԳՐԵԼ ՑԱՆԿԱՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ, ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾՐԱԳՐԻ
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**


Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի մայիսի 23-ի N 630-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 16-րդ կետով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 700-Լ որոշմամբ հաստատված Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետի պահանջներով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել՝

1) Որդեգրել ցանկացող անձանց համար նախատեսված նախապատրաստական դասընթացի հեռավար կազմակերպման և անցկացման ժամանակացույցը՝ համաձայն N 1 հավելվածի:

2) Որդեգրել ցանկացող անձանց համար նախատեսված նախապատրաստական դասընթացի ծրագրի բովանդակությունը՝ համաձայն N 2 հավելվածի:



2. Նախարարության հավասար հնարավորությունների ապահովման վարչությանը՝

1) «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ի հետ միասին դասընթացները կազմակերպել առաջնորդվելով ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 23-ի թիվ 630-Ն որոշմամբ:

2) Ապահովել դասընթացի կազմակերպման և անցկացման ժամանակացույցի և ծրագրի բովանդակության վերաբերյալ տեղեկատվության տեղադրումը նախարարության պաշտոնական կայքէջում, ինչպես նաև նշված տեղեկատվությունը տրամադրել ՀՀ մարզպետարաններին, Երևանի քաղաքապետարանին և «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ին՝ պաշտոնական կայքէջերում տեղադրելու նպատակով:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել նախարարի տեղակալ Տաթևիկ Ստեփանյանին:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ
Տ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

6/14/2021

X

ՏԱԹԵՎԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Signed by: STEPANYAN TATEVİK 6205820293